ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 փետրվարի 2025 թվականի № 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.9-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի 3-րդ մասի և 305-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2025 թվականի հունվարի 27-ի № ԴԽ/15.2/2768-2025 հանձնարարականով ներկայացված Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկանքը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի հուլիսի 1-ի № 271-Ա որոշմամբ հաստատված աշխատանքային խմբի կազմած 2025 թվականի փետրվարի 4-ի № 1 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 07-001-0951-004 և 07-001-0951-005 ծածկագրերով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար ***Սևակ Միքայելյանի*** նկատմամբ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար *Սևակ Միքայելյանը* պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը վճարել կենտրոնական գանձապետարանի *900005243119* հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում *Սևակ Միքայելյանին* որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի փետրվարի 4
ք. Հրազդան